

ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

ՖՐԻԴՐԻԿ ՄԱՐԻԱՆՆԵՍՆԻ

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Վերին աստիճանի ողորմելի վիճակի մէջ է գտնւում ներկալում Բագւակ նաև թարդիւնաբերական գործը և ընդհանրապէս նաև թալին առետուրը Անկեղծ խոսափանում ենք, որ մարդ առանց խղճահարսելու չէ կարող նապել այդ ողորմելի վաճառականներին, որոնք ուզզակի զոհ գնացին իրանց ագիտութեան և հարստանալու անսահման ցանկութեան ձշմարիտ է, 4—5 տարի սրանից առաջ, նոքա իրանց բաղդատոր էին համարում, բայց ակժմ գործերը այն աստիճան կերպարանափոխուած են, որ նա հազար երանի է տալիս վերջին մշակին, որ հաղիւ կարողանում է իւր օրեկան պարենը աշխատել որը գորա համար ստիպած է դաժան կեանքի անողորմ հարսածները կրել, բայց միենուն ժամանակ պարտք չունի Ալո, մեր գործարանատէրերը ակժմ ծանրաբռնւած են մնծամնծ պարտքերով, որոնք գնալով փոխանակ պակասելու, աւելանուում են, որովհետն դործը հազիւ է կարողանում իւր ծախքերը ծածկել Ալո, սարսափելի ճգնաժամի մէջ է ներկալում նաև թարդիւնաբերական գործը Բագւամ, մի ակնպիսի ճգնաժամի մէջ, որի նմանը Բագուն դեռ չի տեսած, ձշմարիտ է, անցեալում ևս եղել են ճգնաժամեր, սակայն շատ թեթև կերպով, կարճատես և ոչ անքան զգալի, Անցեալում նոքա բոլորը լառաջանում էին կամ նաև թիւ պակասութիւնից, կամ նորա առատութիւնից և կամ թէ փոխադրական միջոցների անլարմարութիւնից, մի խօսքով նախընթաց ճգնաժամերը, առանց բացառութեան, ընտանեկան բնաւորութիւն էին կրում, որովհետեւ միշտ հետևանք էին զուտ տեղական հանգամանքների խակ ներկալի մասին, որը ամբողջ մի քանի տարի է, որ շարունակար տևում է և որը գնալով ամելի և աւելի սաստիանում է, մենք

չենք կարող նույն ասել, դորա վերաէ ընտանեկանի կնիքը չկավ. ոռզուա առեստրական բնաւորութիւն ունի և առաջացած է մեր վաճառականների սխալմունքից, որովհետև նոքա մեր արտասահմանեան առեստուրը չկարողացան առելի խելացի հիմունքն երի վերաէ դնել.

Ազդմ մենք կ'աշխատենք պարզել, թէ ինչումն է գուանում մեր վաճառականների սխալը և ինչպէս են մոտածում նոքա իրանց սխալը ուղղվու մասին:

Մեր վաճառականների գլխաւոր սխալը կալանում է նորա մէջ, որ նոքա մրցման մասին ամենատարրական տեղեկութիւն չունէին, չնաևիլով որ մրցումն ամերիկացիների հնտ սկսեց մնդ համար բաւական բարեխջող հանգամանքներով և աննպաստ ամերիկացիների համար. Մեր միտքը պարզելու համար մենք կ'աշխատենք մատնացոց անել մի քանի գէպֆերի վերաէ, որոնք տեղի ունեցան նաւթարդիւնաբերական աշխարհներում 1885—91 թ. ժամանակամիջոցում, Մինչև 1885 թ. եւրոպական բոլոր վաճառանոցներում նաւթալին առեստուրը ամերիկացիների ձեռքումն էր, որովհետև ճանապարհների անլարմարութիւնը մնդ թող չեր տալիս կերոսին արտահանել գէպի եւրոպական գաճառանոցներ, մինչև անգամ առիթ էին ունեցել ծախել Համբուրգի, Ամստերդամի և Լոնդոնի վաճառանոցներում: Սական մեր կերոսինը առանձին ուշադրութեան չէր արժանացել. Ուստի մինչև Անդրկովկասեան երկաթուղու գծի վերջնականացիս պատրաստ լինելը, զգուշանում էին մնծ քանակութեամբ կերոսին տանել Եւրոպա, նամանաւանդ, որ ստիպւած էին ահազին ճանապարհածախսեր վճարել: Ճիշտ ասած, եւրոպական վաճառանոցներում կարիք էլ չէր զգացուում ուրիշ երկրից կերոսին ստանալու, որովհետև ամերիկացիք ընդհանուր պահանջին կարողանում էին բաւարարութիւն տալ. Բաց 1885—86 թ. նոքա մի քանի տեղական հանգամանքների, գլխաւորապէս նաւթի պակասութեան պատճառով, ազ ևս չէին կարողանում առաջապ քանակութեան չսփ կերոսին արտահանել Եւրոպա, Ամերիկափի ամենահարուսա (Բրադֆորդի) հանքերի նաւթը պակասել էր, իսկ Օգափիօլում գտած նոր հանքերի նաւթից լաւ կերոսին պատրաստել չէր կարելի, որովհետև նա իւր մէջ պարունակում էր զգալի տոկոս ծծումբ: Իսկ կերոսինի պահանջը չէր պակասում, ազ զնալով ամելի և աւելի զարգանում էր: Ազդպիսի հանգամանքներուով շատ պարզ է: որ մեր կերոսինը ազատ մուտք կը ստանար եւրոպական վաճառանոցներում, նա մանաւանդ որ արդէն ունէինք ապրանք փոխարդելու լարմարութիւններ՝ Անդրկովկասան երկաթուղու գիծը արդէն պատրաստ էր, երկաթուղու վարչութիւնը

ունէր գծի վրա զրած մօտ 1500 հատ կերտսինի վագոններ (վագոն-ցիստէրն) և մեր վաճառականները մեծ չաջողութեամբ սկսել էին արտահաննել մեր կերտսինը դէպի Բաթում, անտեղից դէպի Տատարստան, Բուլղարիա և ուրիշ մերձաւոր տեղեր Ուրիմն եւրոպացի վաճառականները արդէն մի գաղափար ունէին կազմած մեր կերտսինի մասին, Նոքա գալիս էին Բաթում և անտեղից մեծ քանակութեամբ տանում դէպի Եւրոպացի նշանաւոր վաճառանոցները, Բայց որովհան ալդ ժամանակ կերտսինի լատկութեան վերաէ անքան ուշադրութիւն չէին դարձնում, ինչպէս այժմ, ուստի մեր կերտսինը ծախւում էր նոյն գներավի ինչպէս Ամերիկայինը: Ի դէպ է ասել, որ ալդ ժամանակ կերտսինի գները սարսափելի բարձր էին՝ 1 ր. 20 կոպ. և 1 ր. 35 կոպ. արժէր փութը: Ալդ տեսնելով մեր վաճառականներից շատերը իրանք սկսեցին մեր կերտսինը արտահաննել դէպի Եւրոպական վաճառանոցներ և ծախւել անտեղ կոմիտոնէրների միջոցով: Հենց ալդ ժամանակներին էր, որ Բագրւակ հորիզոնում երեան եկաւ Ռոտշվիլը իւր միլիոններով և առաջարկեց մեր փողի ծարաւ վաճառականներին օգտւել 6% -ով:

Ալդպէս, մի կողմից արտասահմաննեան առևտրից ստացած անագին օգուտները, միս կողմից էժան տոկոսով փողը, կատարելապէս կատաղցրին մեր վաճառականներին՝ Նոքա աներեւակալնլի արագութեամբ լանցացրին իբանց գործերի շրջանակը: Փորեցին նաւթի բազմաթիւ հորեր, մեծացրին իրանց գործարանները՝ աւելացնելով նաւթ զտելու կաթուաների (ուրեգոնակ ցինք) թիւը, աւելացաւ հետեապէս և նոցա գործարանների արդիւնքը (որովհաջուկ գործարան): Երկաթուղու վարչութեան պատկանեալ կաթսաններով որոնց թիւը, ինչպէս վերը վիշեցինք, 1500-ից չէր անցնում, ալդքան կերտսին արտահանէլ դէպի Սև ծովի ափերը անկարելի էր: Կաթսանների պակասութիւն էր զգացւում: Մեր վաճառականները ալդ արգելքի առջև ևս կանգ չ'առին: Թուլաւութիւն խնդրեցին մինիստրութիւնից սեպհական կաթսաններ զնելու երկաթուղու գծի վերաէ և կարծ ժամանակամիջոցում մեր վաճառականները մի քանի հազար սեպհական կաթսաններ դրեցին վիշեալ գծի վերար:

Ալդպէս բաղդը ժպտում էր ամեն կողմից: Արտահանած կերտսինի քանակութիւնը օր ըստ օրէ աւելանում էր և ծախւում բաւական թանգանդերով: 1887—1888 թ. մեր արտասահմաննեան տռեարի ամենավայրուժամանակն էր: Ալդ ժամանակ նաւթավին առևտրի մէջ մի գրաւիչ ոլժկար, որը դէպի իրան էր քաշում բոլորին: Տեղական մանրավաճառները տեսնում էին, թէ ինչպէս բաղդը ամեն կողմից ժպտում է նոցա, ուստի ալդ գրաւիչ ոլժը կլանեց և նոցանից շատերին: Նոքա հանդէս եկան իրանց ունեցածով, երկու անքան էլ պարտք առին և ալդ բոլորով կառուցին գործարաններ, որոնք, ճիշտն ասած, գործարանի հոտը չոճէին:

1887—88 թ. Ան քաղաքում երթեմն ձեր աշխին կընկնէին ազատ օդի մէջ դրած երկու կամ երեք կաթսաներ և մի քանի մշակու Գործերը կերպարանափոխւելուց լիտով ալդ գործարանների հետքն անգամ չմնաց: Այդպիսով տեղից վեր կենողը գործարանսատէր դառաւ Ակդ փոքրիկ գործարանատէրի մեծամասնութիւնը Ռոտշիլդի թիւի տակ մտաւ և իրան ապահով էր կարծում Ա՛ւազ, գոցանից շատ քէրին բաղդը ժամաց: Ռոտշիլդի և Նորէլի չնորհիւ մեր կերոսինը ազատ մուտք ստացաւ եւրոպական բոլոր վաճառանոցներում:

Ակդ փոքրիկ և հարեանցի տեսութիւնից պարզ երեսում է, որ մենք միախն բաղդի բնութեան հանդիսացանք ամերիկացիներին, մրցեցինք նոցա հետ, նուն խակ լաղթող հանդիսացանք մեզանից բոլորպին անկախ պատճառներով և ոչ թէ մեր խելքի կամ վաճառականական հրմտութեան և կամ թէ մեր ապրանքի լատվթեան չնորհիւ:

Մինչդեռ մենք պատքէս ձեռք ու ոսք էինք ընկած, ամերիկացիները՝ նաւթակին առևտորի ասպարիզում կատարող դէպքերին հետեւելով բազմացնում էին իրանց նաւթահորերի թիւը 05ակիում և աշխատում որքան կարելի է շատ նաւթ արդինաբերել՝ խոր համոզւած լինելով, որ վաղ թէ ուշ նրանց կը լաջողուի գտնել ալդ նաւթից ևս կերոսին պատրաստելու միջոցը: Նոցա լուսերը ապարդիւն չ'անցան, Ամերիկակի քիմիկոսները՝ ենթարկելով ալդ նաւթը զանազան հետազոտութիւնների, վեր ջապէս գտան ալդ նաւթից կերոսին պատրաստելու միջոցը: Անունեան շատ կարճ ժամանակամիջոցում՝ նոքա արդէն նաւթից պատրաստած կերոսինը հասցրին նւրոպակի վաճառանոցները, Զնակելով ալդ կերոսինի գոյնի դեղնութեան, նա իւր մի քանի լատկութիւններով գերազանցամ է մերին, որովհետև առելի փալուն և պատճառ է ալրում: Գործի տեխնիկակին լաւ ծանօթ մարդիկ ալդ հանգամանքը բացատրում են նրանով, որ ամերիկացիները իրանց կերոսինը երկու անգամ ջրով լանում են:

Երբ Ամերիկակի նոր տեսակի կերոսինը հասաւ նւրոպակի վաճառանոցները, երբ ամերիկացիք միջոց ստացան զարձեալ առաջւակ չափ կերոսին արտահանելու և սկսեց կատաղի մրցումն մեր և նրանց մէջ, և երբ սրա հետ միաժամանակ ոռուաց փողի կուրսը բարձրացաւ, ալդ ժամանակից գործերը կերպարանափոխւեցան լոգուս ամերիկացիներին և լաղթութիւնը կամաց-կամաց նրանց կողմն անցաւ: Ակժմ մենք կատարելապէս լաղթած ենք: Նրանք գրեթէ խլել են մեր ձեռքից բոլոր վաճառանոցները:

Խնձ թւում է, որ եթէ մեր վաճառականները քիչ թէ շատ հետամուս լինէին Ամերիկակում կատարող դէպքերին, գուցէ ապագէս չըսաղթէւին, և նաւթարդիւնաբերութիւնը ալդ աստիճանի վատթար դրութեան մէջ չընկնէր: Սակայն հաւատացած ենք, որ ալդ մասին նրանցից ոչ մէկը

չի մտածել, Սկզբում, գուցէ չեն էլ կարծել թէ եւրոպակում չանձին ամերիկացիների հակառակորդ ունին և նրանց առաջ մրցման ասպարեզ է բացւում, չեն խմացել թէ ում հետ գործ ունին, ում հետ է վիճակւել նրանց մրցել, ինչպիսի ուժ են ներկայացնում նրանց հակառակորդները Հաւատացած ենք, որ նրանցից ոչ մէկի գլխում ալդ հարցերը իւր ժամանակին չեն ծագել:

Աէժմ մի քանի խօսք ևս առենք, թէ ինչու մենք ամերիկացիներին դիմադրիլ շկարողացանք և չարչար կերպով չաղթեցինք: Մրցելու համար անպայման հարկաւոր է, որ մրցող կողմերը, եթէ ոչ հնուաւոր, զոնէ շատ-քիչ տարբերմն իրարից իրանց ոգերով: Սական պէտք է խռատվանել որ մենք և ամերիկացիք բոլորովին տարբեր ոլժեր ենք ներկայացնում: Եւ անա ինչի մէջ է մեր տարբերութիւնը, Ամերիկացիք քաղաքակրթւած են, իսկ մենք՝ անկիրթ, տղէտ և վալրենի, հետեւապէս պարզ է որ մի արդինաբերական գործ կարող է անել զարգանալ և լաւ պալմանների մէջ դնւել միմիան խելօք, կրթւած ու փորձւած մարդկանց ձեռքում և ոչ թէ մեզ նման համբակների, անուաների, մինչև անգամ անդրագէտների ձեռքում: Նաւթարդիւնաբերական գործը պահանջում է մեծ դրամագլուխ: Կարելի է և փոքր դրամագլխով ալդպիսի գործ սկսել, սակայն հարկաւոր է որ մարդ էժան վարկով օգտւելու միջոց ունենալ: Ազդ լարմարութիւնը ամերիկացի: վաճառականը ունի, ասինքն նա հարուստ է և օգտում է էժան վարկով: ամենաթանկը $5\frac{1}{2}^{\circ}/_0$, իսկ մեր վաճառականը չունի, նախ որ նա ուր է հարստութեան հոտը առել, հետեւապէս նա դեռ չունի մեծ դրամագլուխ: բայց ինչ վերաբերում է վարկին, ալդ մեղանում շատ թանգ է, ամենաէժանը պետական բանկերումն է $5\frac{1}{2}^{\circ}/_0$, սակայն պէտք է ան էլ ի նկատի առնել, որ շատ քչերն են ալդ բազդին արժանանում—օգտում էժան վարկով պետական բանկերում: Մասնաւոր բանկերում վարկը $7\frac{1}{2}^{\circ}/_0$ է, իսկ մասնաւոր անձանց մօտ $12-30^{\circ}/_0$:

Մենք զեռ անցեալ տարի մի ալ տեղում գրել էինք, թէ Ամերիկայում կերոսին պատրաստելը ամերիկացիներին աւելի թանգ է նստում, քան մնզ՝ մեր երկրում: Բայց որովհետև փոխադրական միջոցները թէ Ամերիկայում և թէ Արևմտեան-Եւրոպակում երկու-երեք անգամ աւելի էժան են, քան մեր երկրում, ուստի, մինչև Եւրոպական որ և է վաճառանոց հասցնելը: մեր և նրանց կերոսինը գրեթէ մի և նոյն գինն են ստանում: Սակայն ծախսել նոյն գներով, ինչպէս Ամերիկացինը, մենք չենք կարողանում, որովհետև նրանց կերոսինը մերից լաւ է, նա փալլուն ու պահառ է ալրում: Պաշտօնական տեղեկութիւններից խմանում ենք, որ մեր կերոսինը հաղիւ կարողանում ենք ծախսել ամերիկականի ամենաստարին տեսակի գներով: Ազդպէս մեր կերոսինը Եւրոպական բոլոր վաճառանոց-

Ներում ամերիկականից միշտ աւելի, այն է մօտ 6—8 կոպէկով, էժան է գնահատում:

Գալով ալժմ բուն մրցման եղանակին, մենք չենք կարող մատնացուց չանել այն համերաշխութեան վրայ, որ նկատում է Ամերիկալի վաճառականների մէջ, Եւրոպական վաճառանոցներում, ուր կարելի է հաշմած տասնեակ ֆիրմաներ, նրանք միշտ աշխատում են մի և նորն զինը պահպանել բոլորի մօտ: Ի դէպ է ասել, որ նրանք բաժան-բաժան եղած չեն գործում, այլ կազմած են ընկերութիւններ, որոնք երբէք իրանց թուլ չեն տալիս իրար դէմ մրցել. Ամերիկացի վաճառականը իւր ապրանքը վաճառում է կամ ինքը անձամբ կամ թէ հմուտ և գործին տեղեակ ներկալացուցչի ձեռքով:

Բոլորովին հակառակ պատկեր է ներկալացնում մեր վաճառականների գործունէութեան եղանակը. համերաշխութիւն ասած բանը դրանց մէջ չկալ, մէկը միախն աշխատում է վաստել ընկերութիւններ կազմելուց խտապիում են, որովհետեւ մէկը միախն հաւատ չի ընծառում, գործում են բաժան-բաժան եղած և ոչ թէ իրանք անձամբ, այլ կոմիսիոնէրների միջոցով. Ալդ վերջինները, շատ անգամ իրանց անձնական շահներից դրդւած, կատաղի կերպով իրար դէմ մրցում են: Յաճախ պատահում են ապափիսի դէպքեր. դրանցից մէկին եթէ լաջողուում է ծախել մի նշանաւոր քանակութեան կերոսին, միւսը, լսելով ալդ, շտապում է գալ նորին ապրանք առնողի մօտ և մի և նորն ապրանքը առաջարկել աւելի էժան գներով: Ալդ հանգամանքի շնորհիւ մեր կերոսինի գները շատ լաճախակի փոխախութեան են ենթարկում, որի հետեանքը լինում է այն, որ մեր կերոսինի գինը օր բառ օրէ իջնում է և, բացի դրանից, ախտեղի վաճառականները գգուշանում են մեծ քանակութեամբ մեր կերոսինը առնելուց: Ալդ է պատճառը, որ վերջին ժամանակներս լաճախակի նկատում է եւրոպական վաճառանոցներում մեր կերոսինի անվաճառ մնացած մեծ քանակութիւն, Ուրեմն մենք տեսնում ենք, որ նրանց վաճառականնութեան եղանակը դրւած է շատ խելացի սկզբունքների վրայ, իսկ մերը ուղղակի չարչիութիւն է և ոչ աել: Իսկ չարչիութիւնը դիմադրի և լաղթի խելացի վաճառականութեան—ալդ չաենաւած և լյուած բան է:

Ալսպէս մենք հասնում ենք այն եղրակացութեան, թէ, ամերիկացիների հետ մրցելու համար, անպալման հարկաւոր է, որ մենք նրանց հետ լինենք եթէ ոչ հաւասար պակմանների մէջ, գոնէ պիտի շատ քիչ տարբեր ենք, իսկ ավտմ մեր և ամերիկացիների մէջ ահագին վիճ կաև որը հարկաւոր է դեռ ծանկել և ատա մտածել մրցման մասին: Բայց ալդ դեռ շատ տարիներ կը քաշի, հետեապէս ալժմ բորբովին աւելորդ է մրցման մասին մտածելն անգամ: Եթէ կարելի լինի ամերիկացիների հետ համաձայնութիւն կազմել, ալդ մեզ միջոց կը տակ շարունակել մեր գործը Եւրոպակում

և ուրիշ երկրներում։ Սական մինչ ալդ անելը, մեզ անպալման հարկաւոր է նախ մեր մէջ համաձանութիւն կազմել։ Ամերիկացիք վաղուց արդէն ցանկութիւն են լատանել ալդ մասին, սակայն պահանջել են մեղանից մի ներկալագուցիչ ամբողջ Ներովարում և ուրիշ երկրներում, որի հետ կարելի լինի բանակցութեան մէջ մտնել և վերջնականապէս վճռել թէ մեր և թէ նրանց գործունէութեան սահմանները։ Ամերիկացիք մինչև անգամ զարւանք են լատանում, թէ ինչպէս ալդքան երկար ժամանակ Ապշերոննեան թերակղզու կրեպոսները դիմանում են ալդ սարսափելի ճըդ-նաժամնի հարւածներին։

Աւ միջոցներ կան առաջարկւած։ անցնենք նրանց քննութեանը։

Ներկալումս կատարող դէպքերը պարզ ապացուցանում են, թէ մեր վաճառականները արդէն իրանց սիսալը հասկացել են։ Նոքա արդէն ալդ ճնճաժամից ազատւելու համար միջոցներ են որոնում և մի քանիսը ալդ նապատակով արդէն ծրագիրներ են առաջարկել։ Մենք բոլորի մասին չենք խօսիլ, ալլ կը խօսնենք միմիան ուշաղութեան արժանիների մասին, որոնք իւր ժամանակին մեծ աղմուկ հանեցին։ Դոցա մէջ գլխաւոր տեղը բռնում են պր. վ. և. Ռազողինը, Կասպեան-Սև-ծովեան առևտրական և Նաւթափն ընկերութեանը (Ռոտակլդ)։ և նորակազմ «Մինդիկատ» ընկերութեանը։ Մենք կը ներկայացնենք ալդ առաջարկածների և կատարւած իրողութիւնների քննութիւնը ինչպէս նորա ներկալանում էին մինչ կէս տարի առաջ, թողնելով մեր լաջորդ թղթակցութեանը գործի ալս վերջին կէս տարւակ պատմութիւնը և քննութիւնը։ Ականք պ. Ռազողինի առաջարկից։

Պր. վ. և. Ռազողինը զեկուցեց իւր ծրագիրը մեր վաճառականների գրեթէ բոլորի՝ Ներկալութեամբ անցեալ 1892 թ. մավիս ամսին եղբ. Միրզոյեանների դրասենեակում, Բագոււ Ալդ պարոնը ունի բարձրագուն կըրթութիւն և երկար տարիներ զբաղել է նաւթարդիւնաբերական գործով։ Շնորհիւ ալդ հանգամանքին, նա կարողացել է լաւ ծանօթանալ նաւթափն գոյ ծերի անցեալի և ներկալի հետ, թէ մեր երկրում և թէ Ամերիկալում, և աղջիկամով ճիշտ գաղափար կազմել իրերի ներկաւ դրութեան մասին։ Մենք ներկաւ լողւածում առաջ կը բերենք նորա ծրագրի միմիան գլխաւոր կէտերը։ Նախ և առաջ նա առաջարկում է մեր բոլոր նաւթարդիւնաբերողներին և կերպահնիգործարանատէրերին միանալ և կազմել մի ընկերութիւն և ապա աշխատել։

ա) Ռուսաստանին մերձաւոր երկիրներում կէրոսինը ծախել որոշեալ և ձեռնոտու գներով։

բ) Կանոնաւորել կէրոսին և նաւթափնացորդ ծախելու գործը Ռուսաստանում,

գ) Նինել կէրոսինանցք դէպի Պարսկաստան և աշխատել իւր ձեռքում պահել կէրոսինի առևտուրը հեռու արենելքում:

դ) Նաւթը այնքան արդիւնաբերել, ինչքանի կարիք կըզդացվի, ւամնան դէպս ոչ աւել ներկալում արդիւնաբերածից մի առ ժամանակ, մինչև որ գործերը կանոնաւոր ընթացք կըստանան:

Նախ իւր ծրագրի մէջ երկար խօսում է ընկերութեան ներքին կազմակերպութեան մասին, պատրաստելիք կէրոսինի տեսակների մասին և մինչև անգամ որոշում է մեր գործունէութեան սահմանները, կէրտափնի գները զանազան երկիրներում և ինչքան օգուստ կարելի է ստանալ: Ալդ բոլորի համար նա առաջ է բերում թւանշաններ:

Ալդալիսի մի առաջարկութիւն, որի հիմքը միութիւնն է, աւադի, հաւանութիւն չէ գտնում մեր վաճառականների կողմից: Դորա պատճառը մենք ուրիշ տեղ չենք որոնում, ալ ուղղակի նոցա տղիսութեան մէջ ենք տեսնում, որովհետեւ, եթէ նոքա վերին աստիճանի տպէտ չինէին, ալդ բանը երբէք տեղի չէր ունենալ, ապանքն գերադասել չարչութիւնը՝ վակառականութեան ալդ ամենակատարեալ և խելացի տեսակին:

Պր. Ռազողինը հասկանալով, որ եւրոպական վաճառանցներում շարունակել ամերիկացիների հետ մրցելը ալսունեսն անկարելի է և միտք չունի, առաջարկում է ուշադրութիւն դարձնել արենելքի առևտրին: Ակնտեղ ամերիկացին մեղ հետ մրցել չէ կարող, որովհետև նա հեռու է Ամերիկակայից մօտ 17,000 վերստ, իսկ մեզանից համեմատաբար շատ մօտ է, 8,000 վերստ, հետևապէս նոցա ճանապարհածախսը շատ կը լինի, նա մանաւանդ եթէ կերոսինանցք դնենք դէպի Պարսկաստան, ալդ ամենաէժան և հեշտ փոխադրական միջոցը: Ալդ հանգամանքում մենք շատ հեշտ կարող ենք մեր ձեռքն առնել հեռու արենելքի (Հնդկաստանի, Չինաստանի և ալլն) նաւթի ամբողջ առևտուրը: Ալդ բանի վրակ նս ուշադրութիւն դարձնող չեղաւ և ալդպիսով պ: Ռազողինի առաջարկութիւնը մոռացութեան մատնեց:

Թէև ալդ առաջարկութիւնը չընդունւեց, սական այն պակր ընկնող աստղին նման՝ հնետքից պակծառ գիծ թողեց: Նաւթալին առևտրի բարենորդպման հարցը մի անսպիսի հարց է, որը մոռացութեան տալ անկարելի է: Պ. Ռազողինը մեր ցաւող տեղին հարսածեց, ցաւը զգալի դարձաւ: Մեր վաճառականները կարծես քնից զարթնեցան: Ժողովներ, խորհուրդներ, ծրագրիրներ և առաջարկութիւններ մէկը միւսին հետեւցին:

Երկրորդ առաջարկութիւնը եղաւ կասպեան: Աև. ծովեան առևտրական և նաւթալին ընկերութեան կողմից, որը մեր մէջ չակտնի է Ռոտշիլդ անունով: Ալդ առաջարկութիւնը, ինչպէս նա ծրագրած է, առելի նպատակ ունի պահպանել մեր քակքալւած վաճառականներին, քան որ և է բարեփոխութիւն մտցնել նաւթալին առևտրի մէջ: Եւ ահա թէ ինչու

Վերջին ժամանակներում վաքր գործարանատէրերից շատերը ստիպւած էին գործերի անդաջողութեան պատճառով դադարեցնել իրանց գործերը մի առ ժամանակ, չուսալով որ ապագայում գործերը կը լաւանան, և զարձեալ կարող են շարանափել իրանց գործերը. Սակայն երկրի դրութիւնը համարեա թէ ոչինչ չէր խստանում, և ազգպիսով խեղճերը զրկւած էին մնացել իրանց ասբրուստի միակ ազրիւրից. Մենք կարծում ենք, որ վշաւալ ընկերութեան առաջարկութիւնը աւելի վերաբերում է ազգպիսուներին, որովհետեւ նա առաջարկեց հետեւալը՝ տալ իրան մեր կէրսախնը ծախելու համար. Ազդ կէրսախնի մի մասը նա պէտք է ծախսի Ոռուսաստանում, իսկ միւս մասը ուղարկի արտասահման, տեղաւորի ախտեղ շահմարաններում (քըզերայք) և ծախսի միմիակն ձեռնուու գներով. Ազդ երկրորդ տեսակի վաճառքը նա անւանում է «ուորաքա և կոնցրագու»: Ներկաէ 1893 թ. նա խոստանում էր վճարել ապրանքատիրոջ իւրաքանչիւր փութ կերասինի համար ոչ պակաս քան 9 կոպէկ, իսկ զեստիլատի համար 7 կոպէկ, և թէ ընկերութեանը չաջողւի 9 կոպէկից թանգ կէրսախնը և 7 կոպէկից թանգ զեստիլատը ծախսէ, ան ժամանակ ալդ առաջարկութեան մասնակցողները ստանում են օգուտը հաւասարաչափ կերպով: Բայց եթէ ընկերութիւնը որ և է ամիս վնաս կրի, ալինքն ստիպւած լինի վերոլիշեալ դներից պակասով ծախսէլ, ան ժամանակ նա իրաւունք ունի իւր վնասը ծածկել միւս ամիսներին ստացած օգտից: Ընկերութեան լանձնելիք կէրսախնը պիտի համապատասխանի հետեւել լատկութիւններին. տեսակարար կշուռ 0,825 8. 15°, բանկումն 28° 8. Արել Պենսկու մնքենաւով, գոտնը 2½, մարդկա Վլյուսոնի մնքենաւով, մի խօսքով պահանջուում է բաւարար իստակել առանց սողի (կալաքար) և թթւատի մնացորդների խառնուրդի և, ինչքան կարելի է, պարզ:

Եցէ թէ վաս գների պատճառով արտասահմանեան վաճառանոցներում ընկերութիւնը ստիպւած լինի չծախսէլ և ալղափսով մեծ քանակութեամբ անվաճառ կէրսախն հաւաքփ, աղղպիսի դէպքերում նա իրաւունք ունի իւր կոնտրագէնաներից պահանջնել՝ պակասեցնել իրանց գործարանների արդիւնաբերութիւնը (պրուզուտելեանութեան), բայց ամբողջ տարւաքը ընթացքում երկու անդամնից ոչ ամել, Պալմանագրի ալդ կէտը պարտաւորեցուցիչ է ընկերութեան համար:

Բացի դորանից ընկերութիւնը գործարանների և նաւթահանքերի ապահովութեամբ 6°/0 փող է տալիս իւր կոնտրագէնաներին, նրանքս զի վճարելիս դժար վինի, ընկերութիւնը իւրաքանչիւր ամիս իւր կոնտրագէնաներին տւած կէրսախնի համար հասանելիք փողից մի որոշ զումար, նոցա փոխադարձ համաձանութեամբ, տւասի հաշվին պահում է: Ուրեմն ալսուեղ նկատում է, աղղպէս ասած՝ խնամատարութեան նման մի բան դէպի այն նեղւած, քակալաւած և վերին աստիճանի անմիթար դրա. թեան մէջ զանուղ գործարանատէրերը:

Մինչև ալդ պալմանագրի օրինական ձև ստանալը, քաղաքում լուր էր պատում, թէ վերովիշեալ գները, ալսինքն կերոսինը 9 կոպ. և զեստի լատը 7 կոպ., որոշած է ի նկատի առնելով թէ հում նաւթի միջին գինը ներկա թւականին կը լինի 2 կոպ., և, իցէ թէ թանգ լինի, այն ժամանակ ընկերութիւնը պարտաւոր է աւելացնել թէ կերոսինի և թէ զեստի լատի գինը հաւասարաշափ կերպով։ Սական մենք առիթ ունեցանք անձամբ կարդալ ալդ պալմանագիրը և, դժբաղջաբար, ալդ մասին ոչինչ չփանքք։ Երմի «պղտոր ջրում ձուկ որաւլու» նպատակով էր ալդ լուրը տարածած։ Ընկերութեան մասնակցողների բերանից ենք լսել թէ ալդ կէտը պալմանագրի ամենագլխաւոր կէտերից մէկն էր, Զարմանալին այն էր, որ նոքա պալմանագիրը սառրազրել վերջացրել էին, բայց դարձեալ պնդում էին թէ ալդպէս են պալմանաւորաւած։ Ալդ գէտքը մենք արձանագրում ենք ոչ թէ նոցա ծաղբելու համար, ալ որպէս մի ֆակտ, որ բաւականի պարզ կերպով որոշում է մեր գործատէրերի գրագիտութեան աստիճանը։

Ակսէս թէ անպէս, պալմանագիրը արդէն ստորագրւած է և մեր մատնացոց առելը ոչինչ նշանակութիւն չունի, շատ ուշ է։ Կասպեան։ Անծովիան ընկերութեան նպատակը շատ պարզ է։ Նա ցանկանում է Բագւակ նաւթարդիւնաբերական գործի միակ ներկավացուցիչը լինել արտասահմանեան բոլոր վաճառանոցներում և գորա համար նա ոշինչ չի խնալաւմ։ Ալդ նպատակով նա գործը սկսել է փոքրիկ գործարանատէրն րից, որովհետև դոցա իրար հետ կապելը աւելի հեշտ է, քան մեծերին, նաև նաւանդ որ գոքա վերին աստիճանի անմիխթար դրութեան մէջ են և փողի մեծ կարիք ունին։ Կարծում ենք, եթէ ընկերութեանը լաջողվի դոցա իրար հետ կապել և դոցանից մի ուժեղ մարմին կազմեն, հաւանական է, որ այն ժամանակ մեծ ֆիրմաներից ևս մասնակցեն նորան։ Թէն ընկերութիւնը մի ալդպիսի փորձ արել էր զեռ 1888 թւականին, սական նորան չվաջողւեց։ որովհետև մեր վաճառականները այն ժամանակ կանխիկ փող ունէին, նոքա կարողացան վերադարձնել ընկերութեանը նորանից ստացած աւանսը և վերջացնել պալմանը, իսկ այժմ չեն կարող որովհետև կանխիկ փողի փոխանակ նոքա ահազին պարտքեր ունին, ուստի հաւանական է, որ այս անդամ լաջողվի մի բան անելի Մենք հաւատացած ենք, որ ներկալ 1893 թւականին ընկերութիւնը երբեմն իւրաքանչիւր փութ կերոսինի համար կը վճարի 9½—10 կոպ. միմիան նոցա քանչիւր փութ կերոսինի համար կը վճարի 9½—10 կոպ. միմիան նոցա պալմանագրի մէջ փշւած է և այն հանգամանքը, որ իցէ թէ կոնտրագէնտը չցանկանակ ալլ ևս շարունակել իւր գործը ընկերութեան հետ, այն ժամանակ նա պարտաւոր է միմիան աւանսը վերադարձնել իւր տոկոսով և այնուհետև նա ազատ է պալմանագրի պահանջները կատարելուց։ Այս անգամ ընկերութեան մասնակցողները ախալիսի գործարանատէրեր

են, որոնք փողի շատ կարօտութիւն ունին, ուստի, կարծում ենք, հաղիւթէ ալս տարւակ վերջին դոցանից մէկը ընկերութեան դէմ բողոքէ: Ուրիշն դեռ հինգ տարի կը տեսի այդ կատավի խաղը մկան հետո, կամ ինքն է կուլ գնալու, կամ մեր փոքրիկ գործարանատէրերը, Ապագան ցուց կը տաչ:

Տեղական մեծ ֆիրմաները չեն համակրում կասպեան-Աև.ծովեան, ընկերութեան բռնած ուղղութեանը՝ Նոքա ևս կազմել են մի ընկերութիւն և ձգտում են, որ իրանք լինեն մեր երկրի արդիւնաբերական գործի ներկալացուցիչը արտասահմանեան վաճառանոցներում: Ազդ ընկերութիւնը նորակազմ «Սինդիկատ» ընկերութիւնն է, որի երեսան գալը ակնքան մեծ ազմով հանեց: Նախ քան անցնելը նորա ծրագրին, մենք աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել այդ ընկերութեան ներքին կազմակերպութեան և ընկերների փախակարձ պարտաւրութիւնների մասին:

«Սինդիկատ» ընկերութիւնը կազմում են տեղիս ամենանշանաւոր ֆիրմաները. — Նորէլ Մանթաշեան, Շիբաեւ, Կասպեան ընկերութիւն, Փայֆեւ, Լիանոզով և Նդք. Բուռգաղեանները. Ազդ եօթը ֆիրմաները ահա մի քանի տարի է, որ իրար դէմ կատավի կերպով մրցում են թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում, զլիսաւորապէս արևմտեան Աւրուպակի վաճառանոցներում և իրար մնամեծ վեսաներ պատճառում: Ակալին, ինչպէս երևում է, զոքա արդէն հասկացել են, որ իրար դէմ մրցելով դործը առաջ չի գնալ, մանաւանդ ներկալ հանդամանքներում, երբ կատարելապէս զինաթափ են եղած: Անցեալ տարի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին այդ ֆիրմաները լատանեցին իրար՝ խմբովին գործելու ցանկութիւն և մի քանի նախապատրաստական ժողովներից և խորհուրդներից վետով վճռեցին դնալ Ռոստով (Դոնի վերաէ) քաղաքը և ախտեղ Նորելի զլիսաւոր կառավարչի մասնակցութեամբ պավմանադիր կազմել իրանց մէջ: Ալպակս էլ եղաւ: Անցեալ զեկուեմբեր ամսին վշեալ ֆիրմաների ներկա լացուցիչները ժողովւեցան Ռոստով քաղաքում և որոշեցին առ ակմ հինգ տարի ժամանակով խմբովին գործել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում և ամենաան կերպ աշխատել նաւթափն առևտրի բարենորոգման մասին: Խմբելով միասին՝ զոքա Նորելին ընորեցին իրանց նորկալացուցիչ և նորա ձեռքով պիտի ծախսի այդ եօթ ֆիրմաերի ապրանքը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում: Որոշած են և ապրանքի քանակութիւնը, որ պէտք է լանձնւի Նորէլին ծախսելու համար:

Լեռութիւն

Նաւթափնացորդ

Նորէլ	17	միլ. փութ	25,5	միլ. փութ
Շիբաեւ	5,7	" "	8,55	" "

Մանթաշեան . .	5,5	"	.	.	.	8,25	"	"
Կասպե Հ Ընկ. .	4,6	"	.	.	.	6,9	"	"
Թաղիեւ . . .	4,5	"	.	.	.	6,75	"	"
Լիանողեան . .	4,	"	.	.	.	6,	"	"
Եղբ. Բուղաղեան.	3,5	"	.	.	.	5,25	"	"

Ընդ ամենը 44,8 միլ. փութ. 67,2 միլ. փութ.

Ակտեղ որոշած քանակութիւնից աւելացնել իւր գործարանի արդիւնաբերութիւնը ոչ ոք իրաւունք չունի, իսկ պակասեցնել կարող է, միմիան հարկաւոր է ալդ մասին երեք ամիս առաջ լայտնել ընկերութեան մասնածովովին, Ընկերութեան զանձնելիք իւրաքանչիւր 500,000 փութ կերոսինի համար անդամը ունի մի ձախու թացառութիւն է կաղմում միմիան Նորէլը, որը, 34 ձախու փոխանակ, ունի միմիան 30, իսկ միաները՝ համեմատ զանձնելիք կերոսինի քանակութեան, Մանթաշեան 11, Նիքաեւ 11, Կասպեան ընկերութիւն 9, Թաղիեւ 9, Լիանողեան 8, Եղբ. Բուղաղեանները 7, ընդամենը 85 ձախու.

Ընկերութեան կարիքները հոգալու համար վճռել են անդամավճար իւրաքանչիւր մէկ միլիոն փութ կերոսինի համար 10,000 մանէթ. Աղպիսով մալր դրամագլուխը կազմւած է հետեւեալ վճարներից. Նորէլ—170,000 րուբլի, Նիքաեւ—57,000 ր., Մանթաշեան—55,000 ր., Կասպեան ընկ.—46,000 ր., Թաղիեւ—45,000 ր., Լիանողեան—40,000 ր. և Եղբ. Բուղաղեաններ—35,000 ր. ընդամենը 448,000 ր., որը, ի համաձայն պամանագրին, մինչ ներկա տարւակ լունւար ամսի 15-ը պիտի զանձնէին Վոլժսկօ Կամսկի առևտրական բանկին, բացելով նորա թաքրակ բաժանմունքում ընթացիկ հաշիւ հետեւեալ վերնագրով. «Նորէլ, Թաղիեւ և Մանթաշեան», Եցէ թէ ընկերութիւնը դարձեալ փողի կարիք զգակ այն ժամանակ անդամները պարտաւոր են պակասը լրացնել իւրանց ձախների համեմատ.

Ինչպէս վերը վիշտինք, ընկերութեան միակ ներկալացուցիչը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում Նորէլն է, Վաճառքը ընդհանուր է, ալինքն իւրաքանչիւր անդամ ծախսած ապրանքի մէջ բոլոր անդամները բաժին ունեն, Նորէլը որպէս վարձատրութիւն ստանում է միւս ընկերներից՝ 1/3, կոպէկ Ռուսաստանում ծախսած իւրաքանչիւր փութ կերոսինի համար և 1/3, կոպ. արտասահմանում ծախսածի համար, իսկ նաւթամացորդից ստանում է 1/3, կոպէկ. Նա ոչինչ չէ ստանում, եթէ վաճառքը կատարի Բագու, Նաւի մէջ, կամ թէ գնողի պահնեստների մէջ.

Ակժմ անցնենք նորա առաջարկութեան, Փոքր գործարանատէրների վիճակը բարտքելու համար նա հետեւեալն է առաջարկում. ընդունել իւրանից հում նաւթ, զտել գործարաններում, մաքրել ստացած դեստիլատները և ախունեան վերադարձնել «Սինդիկատ»-ին ստացած թէ կերոսինը և թէ

նաւթամբացորդը, 'ի բաց առեալ այն քանակութիւնը, որ կը գործազրի գործարանում. Դորա համար այն գործարանատէրերը, որոնք կը ցանկան մասնակցել ընկերութեան ընդհանուր օգտին, կը ստանան 2½ կոպ. խրաբանչիւր գութե կերոսինի համար, խել որոնք չեն ցանկանալ մաս. Նակցել լիշեալ օգտին, կը ստանան և կոպէկ. Աղդ առաջարկութեան և մասն սկցողներ կան, բայց շատ քիչ.

Աղդպէս մեր վաճառականները ներկագում երկու գօրեղ բանակի ևն բաժանւած, և հաւանական է, որ մի առ ժամանակ իրար զէմ զոքա մրցնն, որովհետեւ երկուսն էլ միենողն նպատակին են ձգտում. Սական կան և այնպիսիներ, որոնք ոչ մի բանակին չեն ցանկանում մասնակցել, առ ինքնազլուխ են ուղում գործել. Աղդպիսիների վերաէ մենք նախում ենք որպէս նաւթավին առեարի ցեցերի վերաէ, որովհեան դոքա իրանց գործունէութեամբ վեստ են սպածառելու ընդհանուր գործին. Նոքա իրանց շարշութիւնից ձեռք չեն քաշելու, ոկսելու են գարձեալ մրցել և վերջ ի վերջու կընկնեն նոյն դրութեան մէջ, ինչպէս են նոյա եղբայրների մաժամանութիւնը:

Ներկաւ տարւաէ մարտ ամսին էր, որ մարտաքաղաքի թերթերը լուր բերին թէ Ալինդիկատին ներկալացուցիչ Նորէլի և Կասպեան. Սև ծովեան ընկերութեան մէջ արդէն համաձափնութիւն է կաչացած և որոշւած են խրաբանչիւրի գործունէութեան սահմանները. Ալինդիկաս կազմող ֆիրմաների բոլոր ներկալացուցիչները գնացին Պետերբուրգ աղդ բանը քըն.

Աղդ փոքրիկ տեսութիւնը անելուց ինտու մենք չենք կարող մի նկատողութիւն չանել աղդ ընկերութիւնների հասցէսով. Հաղիւ թէ աղդ կարճ ժամանակամիջնոցում կարելի լինի մի որ և է բարեփոխութիւն մացնել նաւթավին առեարի եղանակի մէջ և բարտքել մեր քայլալած վաճառականների վիճակը. Գործել նոյն ուղղութեամբ, ինչպէս աղդ ծրագրւած է սպակմանազքերի մէջ, սպարտառըցուցիչ չէ մասնակցողների ոչ մէկի համար հինգ տարին լրանալուց վետով. Ուրեմն ինչով են սպահովւած մոր վաճառականները, եթէ մասնակցեն ալս կամ այն առաջարկութեանը, ոչնչով, կը սպատասիսաններ մենք, Կասպեան. Սև ծովեան ընկերութիւնից հնանալու դեռ անքան զգալի հետեանք չի ունենալ, ինչքան Ալինդիկատից. Մեզ սարսափեցնում է մի հանգամանք. Մի գուցէ երկու-երեք տարի գործելուց վետով Ալինդիկաս ընկերութեան անդամների մէջ երկարաւ. Կութիւններ ծագեն և նոյա փոխադարձ կարարերութիւնները լարւեն և դոյց չնորհիւ ընկերութիւնը քանդւի. Այն ժամանակ մենք կարծում ենք որ եօթը Փիրմանների գրութիւնը, 'ի բաց առեալ Նորէլնը, վերին սատի. ճանի ողորմելի կը լինի և աւելի վատ քան մինչև ընկերութիւն կազմուը. Գուցէ մեր աղդ խօսքերը շատերին խորթ թւան, ուստի սպազմէնք թէ

ինչու Մենք լիշեցինք, որ Նորէլը եօթը Փիրմաների միակ ներկալացուցիչն է թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում, հետևապէս ապրանք առնողները միմիայն նորան են ճանաչելու և աղղավիսով Նորէլի կերոսինը ամելի հռչակ է ստանալու Առանց այն էլ ափմ Պետերբուրգի և Մոսկվալի վաճառանոցներում Նորէլի կերոսինը ծ կոպ. թանգ է զնահատում քան ուրիշ Փիրմաներինը: Եցէ թէ քանդեց ալդ ընկերութիւնը, այն ժամանակ հազիւ թէ մէկը Ռուսաստանի սահմաններում կարողանաց մրցել Նորէլի հետ: Ալդ տեսակէտից նաևելով Կասպիան-Սև ծովեան ընկերութեան բանակը մտնողները աւելի ապահով են քան եօթը Փիրմաները:

Աղղավէս թէ ալճակս մենք կարծում ենք, որ ալդ փորձերը հող են պատրաստում պ. Ռազողինի ծրագրի իրագործմէլու համար: Դեռ շատ ընկերութիւններ կը կազմէն և աղղավիսով կամաց կամաց կը մօտենան պ. Ռազողինի առաջարկութեան: Վաղ թէ ուշ ալդառաջարկութիւնը ընդունելու է եթէ ոչ լիովին, գոնէ կարծում ենք որ շատ քիչ փափոխութեամբ Ռուսա մէջ մենք համոզւածենք:

Մեզ մնում է սակալն դեռ ևս խօսել մարտից դէս կատարւած եղելութիւնների մասին, որ և կ'անենք մի երկրորդ նամակով: